

*Էակ* մըն է, բան մը որ ընդհանրական է՝ համայն մարդկության համար: Ասոր կողքին, սակայն, մարդը նաեւ *ընկերային իրաւական Էակ* մըն է, որով կը զանազանուին ընկերութիւններն ու մշակոյթները: Մարդու մասին վերոյիշեալ երկու տեսակետները, որոնք ծանօթ են հնադարեան ժամանակներէն (տե՛ս Արիստոտելի «*Պետութիւն*», „*Politeia*“ երկը), ցոյց կու տան, որ մարդ ի ծնէ (բնածին) բարոյականութեան կարողութիւնն ու հակումը ունի, սակայն, այդ ուղղութեամբ ան դեռ պէտք է զարգանայ՝ ընկերութեան մը կամ մշակոյթի մը մէջ: Այս իմաստով կարելի է խօսիլ՝ ընկերա-հասարակական բարոյականութեան մը (Social Morals) մասին:

Բարոյականութեան զարգացման ընթացքին, անհրաժեշտ են մարդու ներքին ձգտումը կամ ներմղումը՝ դէպի բարոյականութիւն եւ լուրջ ճիգը՝ անոր հասնելու համար: Այստեղ բարոյականութիւնը կը յայտնուի իր «պէտք է»ի հարկադրանքով կամ հրամայականով, որուն հետեւելով միայն կարելի է իրագործել՝ որպէս *բարոյական բանական Էակ* զարգանալու կարելիութիւնը: Բարոյականութեան զարգացման ընթացքը, նախ եւ առաջ տեղի կ'ունենայ ընկերային շրջապատի մը մէջ, ուր մարդ կը ձգտի, կը մտահոգուի ու նոյնիսկ կը պայքարի իր անձի ճանաչման ու գնահատման համար: Այս ընկերային շրջապատին մէջ է, որ մարդ կը ծանօթանայ բարոյական չափանիշերուն ու արժէքներուն, արտօնեալ ու արգիլեալ վարմունքին կամ վարուելակերպին, ինչպէս նաեւ ընկերային շրջապատի անդամակցութեան կամ օտարացման:

*Բարոյականութիւն* հասկացութիւնը, պատմութեան ընթացքին, ընդհանրապէս, ենթակայ եղած է փոփոխութիւններու: Ան կը կազմուի անհատական կամ ընկերային-հասարակական ոլորտներու մէջ, որոնք միշտ չէ որ կը համընկնին: Այլ խօսքով, անհատական բարոյական սկզբունքները կրնան չհամապատասխանել ընկերային-հասարակական բարոյական սկզբունքներուն: Այսուհանդերձ, յաճախ, ընկերային հասարակութեան մէջ ընդունուած կ'ըլլան բարոյական որոշ կանոններ, պահանջներ ու պարտաւորութիւններ եւ ասոնց կողքին նաեւ բարձր արժէք ունեցող *Գերագոյն Բարին*, որոնք (ինչպէս յիշուեցաւ) կրնան զանազան ընկերային հասարակութիւններու եւ զանազան ժամանակաշրջաններու մէջ փոփոխութեան ենթարկուիլ:

*Բարիի* ու *չարի* միջեւ, *լաւի* ու *վատի* միջեւ, ինչպէս նաեւ *ճիշդի* ու *սխալի* միջեւ զանազանութեան կարողութիւնը հետեւանքն է ընդհանրապէս՝ անհատի դաստիարակութեան եւ տուեալ ընկերութեան մէջ կրած իր համայնացման (Սոցիալացում, Socialization):

*Բարոյականութիւնը* մարդոց վարքն ու վարմունքը կարգաւորող հիմնական շրջանակն է, մասնաւոր այլ մարդոց նկատմամբ: Բարոյականութիւնը կը բովանդակէ՝ բարոյական արժէքներու չափանիշներ, վարմունքի ու վարուելակերպի կանոններ եւ կեանքի իմաստի պատկերացումներ: Բարոյականութիւնը պարզ համաձայնութենէ մը աւելի պէտք է վաւերական ուժի մէջ ըլլայ՝ բոլորին համար. ան պէտք է պարփակէ թէ՛ անհատները եւ թէ՛ հաստատութիւնները, իրենց ընկերային, քաղաքական, տնտեսական եւ մշակութային ոլորտներուն մէջ: